Սննդի արտադրության և վերամշակման ներդրումներ

GEFF Green Economy Financing Facility

European Bank for Reconstruction and Development

ՍՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒ ԱՎԵԼԻ ՄՐՑՈՒՆԱԿ՝ GEFF-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ

GEFF-ի կանաչ ֆինանսավորումը շահեկան է՝ անկախ Ձեր կազմակերպության չափերից

Դոնորներ՝

GREEN CLIMATE FUND

CIF CLIMATE INVESTMENT FUNDS

Դուք հանդիսանում եք սննդի արտադրող կամ վերամշակող: Ձեր բիվնեսի արտադրական գործընթացները էներգատար են: Ցանկանո՞ւմ եք բարձրացնել բիվնեսի մրցունակությունը և անգամ մուտք գործել նոր շուկաներ՝ կատարելով ներդրումներ էներգախնայող սարքավորումներ և/կամ նյութեր ձեռք բերելու ուղղությամբ:

ՎԶԵԲ-ի Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագիրը (GEFF) էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում ֆինանսավորել է շուրջ 5 մլրդ եվրո՝ ավելի քան 202,000 ներդրումային նախագծերում: Այս ներդրումներից օգտվել են ոչ միայն բիվնեսները և տնտեսությունը, այլ նաև կրճատվել է տարեկան ավելի քան 9 մլն տոննա ածխաթթու գազի արտանետում:

ՎԶԵԲ-ի կանաչ տնտեսության վարգացման մոտեցումն է բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաների և GEFF-ի ֆինանսավորման համադրումը տեղական շուկայում:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՍՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ և ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ GEFF-Ի ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Ծրագրի մասնակից յուրաքանչյուր երկրի համար, GEFF-ը ուսումնասիրել է լայնորեն կիրառվող տեխնոլոգիաները և սահմանել արդյունավետության նվազագույն ցուցանիշներ, որոնք տվյալ երկրի համար միջինացված չափորոշիչներից բարձր են առնվազն 20%-ով: Այսպիսի տեխնոլոգիաների ֆինանսավորման գործընթացը հեշտացնելու համար, կիրառվում է տեխնոլոգիաների համապատասխանության ստուգման երկու մոտեցում՝

I. **Նախապես հաստատված տեխնոլոգիաներ և նյութեր,** որոնք առկա են տեղական շուկայի համար նախատեսված **Կանաչ տեխնոլոգիաների ցանկում՝** **techselector.com/armenia**

- Գազի կաթսաներ
- Հովացնող սարքեր, օր.՝ ջրային ու օդային հովացմամբ չիլլերներ
- Ջերմային պոմպեր, օր.՝ օդային, ջրային և երկրաջերմային աղբյուրներից սնվող
- Արևային պանելներ, արևային ջրատաքացման համակարգեր
- Շարժիչներ ու պոմպեր, օր.՝ շրջանառու և ճնշումային պոմպեր
- Տրանսպորտ, օրինակ՝ էլեկտրական, դիզելային և հեղուկ գազով աշխատող ամբարձիչներ

- Ջերմամեկուսացում սկսած 50մմ-ից
- Ջերմամեկուսիչ պատուհաններ և դռներ
- Լուսավորում, օր.՝ LED լամպեր

II. Բիզնեսի էներգախնայողության հնարավորությունները համալիր կերպով բացահայտելու համար՝ հնարավոր է օգտվել ներդրման համապատասխանության **գնահատման ծառայությունից**, որը հաճախորդների համար անվճար է, քանի որ ֆինանսավորվում է Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) կողմից:

ԻՆՉՈՒ Է GEFF-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԱՎԻՉ

GEFF-ը Հայաստանում ծրագրի գործընկեր ֆինանսական կառույցները մշտապես ձգտում են ապահովել՝

I. երկարաժամկետ ֆինանսավորում՝ կարճաժամկետ դրամական հոսքերն առավել արդյունավետ օգտագործելու նպատակով,

II. տեղական ու արտարժույթով ֆինանսավորում մրցունակ պայմաններով,

III. լիզինգի հնարավորություն, որն այլ օգուտներից բացի, չի ենթադրում գրավադրում:

GEFF-Ի ԿՈՂՄԻՑ ՎԵՐՋԵՐՍ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԱԾ ՍՆՆԴԻ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՕՐԻՆԱԿ

«ՌՌՌ հանքային ջրերի գործարանի տեղակայվածությունն ու շենքի հարթ տանիքը շատ հարմար են էլեկտրաէներգիայի արտադրության համար: Այդ իսկ պատճառով, մեծ սխալ կլիներ չօգտվել այդ առավելություններից, ինչպես նաև GEFF-ի ֆինանսավորման հնարավորություններից՝ արևային ֆոտովոլտային կայանի միջոցով էներգիայի տարեկան կարիքի 39%-ը բավարարելու համար:

Ակնկալում ենք, որ ներդրումն իրականացնելուց 4 տարի անց, կայանը ընկերության համար շոշափելի արդյունքներ կստեղծի»:

Ժորա Սարգսյան, Տնօրեն
«ՌՌՌ» հանքային ջրերի գործարան ՓԲԸ
Ներդրման տեսակ՝ 500 կՎտ տանիքի PV կայան
Ներդրման արժեք՝ US$ 310,380
էներգախնայողություն՝ 897 ՄՎտժ/տարի
CO_2 կրճատում՝ 392 տոննա/տարի
Հետգնման ժամկետ՝ 4 տարի

GEFF-ի ֆինանսավորումից օգտվելու համար Ձեր քայլերը՝

I. Ընտրե՛ք Ձեզ անհրաժեշտ տեխնոլոգիան բարձր արդյունավետությամբ **Կանաչ տեխնոլոգիաների ցանկից** **techselector.com/armenia** կամ այլ առաջարկներից

II. Ամփոփե՛ք **Ձեր ներդրման տեխնիկական և ֆինանսական պահանջները**

III. Դիմե՛ք **GEFF-ի Գործընկեր ֆինանսական կառույցին (ԳՖԿ)** ֆինանսավորում ստանալու համար **ebrdgeff.com/armenia/am/financing**

IV. Անհրաժեշտության դեպքում, ստացե՛ք **անվճար խորհրդատվություն** և նախագծի գնահատում GEFF-ի փորձառու մասնագետների կողմից

Ստացե՛ք **ֆինանսավորում վարկային կամ լիզինգի պայմանագրի կնքմամբ**

Տեղադրե՛ք **համապատասխան տեխնոլոգիան**

Օգտվե՛ք **էներգիայի խնայողությունից,** ինչպես նաև **ֆինանսական օգուտներից***

* Բիզնեսի սեփական կարիքները բավարարելու նպատակով իրականացված արևային էներգիայի ներդրումային ծրագրերը կարող են վարկի գումարի 20%-ի չափով պարգևավճար ստանալ: Պարգևավճարի համար նախատեսված ֆոնդը տրամադրվել է Կլիմայի ներդրումային ֆոնդերի (CIF) «Ավելացնելով վերականգնվող էներգիայի ներդրումները» (SREP) ծրագրի շրջանակներում:

Սիրով պատրաստ ենք պատասխանել Ձեր բոլոր հարցերին:

GEFF-ը Հայաստանում
ՀՀ, ք. Երևան | Հանրապետության 62 փողոց, բն. 101
armenia@ebrdgeff.com | +374 10 542 721 | www.ebrdgeff.com/armenia